ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.12.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/269

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77» ծածկագրով գնանշման հարցում, տպագրական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17550-2020 գրությամբ «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.11.2020թ.-ի թիվ 535 գրության հիման վրա, 30.11.2020թ.-ին «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 30.11.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 30.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/269 համարի ծածկագիրը:

10.12.2020թ.-ին և 18.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.12.2020թ.-ին:

2. **«Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.**

«Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը 25.11.2020թ.-ի թիվ 535 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տպագրական ծառայությունների ձեռբերման նպատակով 02.11.2020 թվականին N ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով՝ բաղկացած մեկ չափաբաժնից, թղթային ձևով հայտարարված մրցույթին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև Արտյոմ Գալստյան Վաչագանի Ա/Ձ-ն: Վերջինիս գնահատող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից, հետագայում հրաժարվելով պայմանագիր կնքելուց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արտյոմ Գալստյան Վաչագանի Ա/Ձ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց, գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվել է պայմանգիրն ստորագրելու իրավունքից:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի՝ խնդրում ենք

նախաձեռնել Արտյոմ Գալստյան Վաչագանի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. **«Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 30.11.2020թ.-ին գրությամբ դիմել է «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17550-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. **ՍՑ-LO**-2020/269 **ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.11.2020թ.-ին հայտարարվել է «ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն:

ii. «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի

պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.11.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին:

iv. 12.11.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

v. Պատվիրատուն, 20.11.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է կնքել և կից գրությամբ Պատվիրատուին ներկայացնել կնքված պայմանագրի երկուական օրինակները, ինչպես նաև որակավորման ապահովումները (միակողմանի սահմանված տուժանքի ձևով):

vi. «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն 21.11.2020թ.-ի գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հրաժարվում է համագործակցությունից, ելնելով ընկերության համար ստեղծված չնախատեսված պայմաններից:

vii. Հանձնաժողովի 24.11.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն 21.11.2020թ.-ին էլեկտրոնային փոստով հայտնել է, որ հրաժարվում է պայմանագիր կնքելուց և Հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17550-2020 գրությամբ «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման

ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.11.2020թ.-ին հայտարարված «ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 09.11.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից: Պատվիրատուն, Մասնակցին ներկայացնելով «ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է կնքել և Պատվիրատուին ներկայացնել կնքված պայմանագրի երկուական օրինակները, ինչպես նաև որակավորման ապահովումները: Սակայն «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն 21.11.2020թ.-ին ներկայացված գրությամբ, դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հրաժարվում է համագործակցությունից, ելնելով ընկերության համար ստեղծված չնախատեսված պայմաններից:

Հանձնաժողովի 24.11.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն 21.11.2020թ.-ին էլեկտրոնային փոստով հայտնել է, որ հրաժարվում է պայմանագիր կնքելուց և Հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից::

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԹԱԿ-ԳՀԾՁԲ-20/77» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2020թ.-ի թիվ 26/26-1/17550-2020 գրությամբ «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/269 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արտյոմ Գալստյան Վաչագանի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**